

1689

9(395.5)

S-37

№ 2

, ԽԱՐԵՎԱՆԻ-Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ

№ 2

31(91542)

ԱՏ-76



ԽՐԱՐՏԱԿ

ԵԿ

ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ՊՐԻՍԿՈՆԻ

ԳՐԱՆ Է ԽՈՂՈՉ.

Կազմից
ՀՕՅԻ ՏԵՐ-ԱԱՏՈՒԱԾԱՏՐԵՈՆ

ԹԻՖԼԻՍ

Էլեկտրոպечатня Т-ва „Надежда“, Семен. ул. № 4. Телеф. 664.

1908

30 MAY 2011
2 SER 2006

№ 2

,ԽԱՐԱԿԵՐՎԵՐԻ ԴՐԱԳԱՐԱԿԻ

№ 2

9(395.5)
S-37

ՈՒՐԱՐՏՈՒ

64

ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

1004
144792
144792

Քարշենի

Կազմոց
ՀԱՅ ՏԵՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԱՆ

Թիֆլիս

Электропечатня Т-ва „Надежда“, Семен. ул. № 4. Телеф. 664.

1908

ՈՒՐԱՐՏՈՒ

ԵՒ

ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայոց ազգի պատմութիւնը սու-
Աղբիւրներ վորելու համար երկու տեսակ աղբիւր-
 ներ կան. ա) հայ մատեն ագիր-
 ներ, որոնք մինչև հինգերորդ դարը օտար լեզուով,
 իսկ հինգերորդ դարից սկսած հայերէն լեզուով գրի
 են առել ստոյգ ու անստոյգ պատմութիւն, առասպել-
 ներն ու աւանդութիւնները խառնել են իրար և աւելի
 այլանդակել են ճշմարտութիւնը, քան թէ եղածը գրել:
 Ուշ ժամանակներում միայն հայ պատմիչները աւելի
 հաւաստի ու հաւատալի պատմութիւն են տալիս, քան
 առաջինները և բ) օտար պատմիչներ ու բեն-
 ուագիր արձան ագրութիւններ, որոնք աւելի
 ճշմարտապատում են և այս աղբիւրների հիման վրայ
 գիտնականները կարողացել են կազմել իսկական պատ-
 մութիւն, որ և հաւատալի է և ճշմարտախօս:

Ես այսուեղ կաշխատեմ ճանօթացնել ձեզ այդ

պատմութեան հետ, որպէս զի դուք գիտենաք թէ երբ
առաջացաւ Հայոց ազգը և որտեղից եկան նոքա այն
երկիր, որ Հայաստան է կոչւում:

Մարդկային գիկ իրենց բնաւորութեամբ և մանա-
ցելեր ւանդ արտաքին տեսքով երեք մեծ
խմբի են բաժանուում՝ սպիտակ ա-
մուրթ, գեղնամուրթ և սևամուրթ: Սեամորթնե-
րին պատկանում են Ագրիկայի և Աւատրալիայի բնիկ-
ները, գեղնամորթներին՝ Ամերիկայի բնիկները, Ասիա-
յի արևելեան, հիւսիս-արևելեան և հարաւ արևելեան
երկիրների բնակչութեան մեծ մասը: Սպիտակամորթ-
ները, որ երեմն կոչւում են նաև միջեր կռային,
ապրում են ամեն տեղ, ամեն երկրում, բայց գլխաւո-
րապէս եւրոպայում ու Ասիայի արևելեան ու հարաւ
արևմտեան երկիրներում: Այս ցեղը աւելի ընդունակ
գոյնուեց կուլտուրական յառաջադիմութեան համար,
նա էր որ երկիրը լորեց ստեղծագործութիւններով և
պատմութիւնն էլ աւելի նրանցով է զբաղւում, քան
այլ ցեղերով: Սպիտակամորթները բաժանուում են երեք
գլխաւոր ճիւղերի ա) արիական կամ հնդեւ ըո-
պական (յաձախ և հնդգերմանական), որին պատ-
կանում են յոյներ, իտալական ցեղեր, ալբանացեր,
կէլտեր, գերմանացեր, ոլաւոններ, ինդուսներ, իրան-
ցեր փոխակիցիք և հայեր. բ) Սեմական՝ երշա-
յեցիք կամ հրէաներ, ասուրացիք, բարելացիք և փիւ-
նիկեցիք. գ) Քամական՝ եգիպտացիք:

Հայերը պատկանում են հնդեւ-
Հնդեւոպացոց բոպական ճիւղին և արդէն պարզուած
հայրենիքը է, որ նրանք, ինչպէս և բոլոր հնդեւ-
բոպացիք կեանք են ստացել հնդեւո-
պացոց որորանում և այգտեղից են եկել այն երկիր.
Ուրարտու էր կոչւում, ստեղծել են հայութեան
համար սեփական հայրենիք, որ յետոյ Հայաստան կո-
չուեց:

Հնդեւոպացոց որրանը կամ սկզբնական հայ-
րինիքը, որտեղ որ նրանք առաջացան և որտեղից գաղ-
թեցին զանազան երկիրներ, գանւում էր Վոլգա և
Դնէպր գետերի հովիտներում և Սև ծովի ափերից
սկսած մինչև Կարպատեան լեռները: Սյատեղից ին-
տուաներն ու իրանցիները կովկասի վրայով Ասիա ան-
ցան, մտան Իրան և Թուրքեատան, իսկ փոխգետացիք
գաղթեցին Եգիշեան ծովի և կամ Բոսֆորի միջով: Հա-
յերը որպէս առանձին հնդեւոպացի մի ճիւղ՝ զնացին
նոյն ճանապարհով, որ ընտրել էին փոխգետացիք, բայց
առանձնացած էլ մնացին ու չխառնուեցան նրանց հետ.

Գիտնականների կարծիքով հայե-
Հայերի գաղրը ըլ հնդեւոպացոց հայրենիքից գուրս
են եկել մօտաւորապէս Քրիստոսից
2500 տարի առաջ, բայց նրանք սկզբում բնակութիւն
հաստատեցին Թեսալիայում, որտեղ Բէրէյեան լճի ափին
հնում հղել է Արմէն անունով քաղաք, որ գտնւում էր
Լարիսաս և Ֆերա քաղաքների միջև: Բայց այդ քաղաքի
հայերի հիմնած լինելը դեռ ևս հաստատուն հիմք չու-
նի, միայն այնքան ճիշտ է, որ հայերը Քրիստոսից մօտ
900 տ. առաջ մեղնից անյայտ պատճառներով թողել են
Թեսալիան և անցել Փոքր Ասիա: Ուրեմն հայերը մօտ

1500 տարի թափառել են զանազան երկրներում, բայց գլխաւորապէս Բալկանեան թերակղղու վրայ:

Փոքր Ասիայից հայերը շարունակեցին իրենց ճանապարհը դէպի արևելք, մինչև որ մօտ 200 տարի դանդաղ առաջ գնալով Քրիստոսից 670—660 տարի առաջ հասան Հայաստան, որ այդ ժամանակ Ուրարտ ու Էր կոչում:

Հայեւ Մի առ ժամանակ թողնենք հայեւ յերի գաղթը և տեսնենք թէ ինչպէս հայ ենք կոչուել: Հայոց պատմութեան ամենազլխաւոր պատմիչ Մովսէս Խորենացին, որ հինգերորդ դարում և կամ աւելի ուշ ժամանակներում գրի է առել Հայոց պատմութիւնը, ազգասիրաբար և կամ թէ չգիտենալով իրական ծագումը, հայերիս հայ կոչուելը վերագրում է Հայկ նահապետին, որ ըստ Խորենացու եղել է Հայոց ազգի նախահայր, բայց գիտնականները հերքում են նրա առածները և հաստատում, որ հայ անունը հնդերոպական ծագում ունի և դուքս է եկել պէտի (peti) բառից և հայերէնի մէջ պէտ տառը է դարձել, իսկ ո՞ւ ի, իսկ հնդերոպացոց պէտէր (peter) կամ յունարէն ու լատիներէն պատէր (pater) փոխուել է հայր բառի: Այս բառը հայոց մէջ մտել է պետ (pet) դրութեամբ, որ նշանակում է իշխող կամ տիրող և շատ բառերի մէջ պահպանուել է, ինչպէս օրինակ հայրապետ, զօրապետ, նահապետ և այլն: Հայերն ուրեմն իրենց իշխողներ՝ պետ էին կոչում և այդ էլ այն պատճառով, որ բոլոր հնդերոպացիք ուր որ գնում էին՝ տեղացիներից տարբերուելու համար այդպէս էին իրանց անուանում և երբ հայերը եկան Հայաստան,

այնտեղ ապրում էին խահդեր, որ բոլորովին այլ ժողովուրդ էին և նրանց հպատակեցրին իրենց: Երբ Քրիստոսից չորս դար առաջ պարսիկները նուռածեցին Հայոց աշխարհը, այդ օրուանից արդէն երկիրը կոչուեց Հայ աստան, (ստան = երկիր, աշխարհ, կողմն) այսինքն Հայոց երկիր:

Հայաստան լեռնային երկիր է, բայց կլիման ամեն տեղ միատեսակ չէ, որովհետև լեռները իրենց գրութեամբ շատ տեղեր արգելք են հանդիսանում հարաւային ու արևելեան տաքութեան՝ ջերմութեան, մինչդեռ հիւսիսային ցորետն ազատ մուտք ունի: Ներքին Հայաստանը կամ աւելի լաւ ասած երկրի միջնավայրը, բուսականութեամբ շատ ազգատ է, ահազին տարածութիւններ կան առանց ծառերի, ուր միաց թէ անտառները, որոնք շատ քիչ են: Երկրի մէջ աւելի մշակում են ցորեն, բամբակ, բրինձ, գարի, վուշ, բանջարեղին և այլն: Բայց կան վայրեր, որտեղ հնարաւորութիւն չկայ երկրագործութիւնն իր շաւղով առաջ տանելու, որովհետև լեռների վրայ հալուող ձիւնից առաջացած հեղեղներից երկիրը ծածկում է ջերով, գետերը գուրս են գալիս իրենց ափերից և ողողում ընդառնակ տարածութիւններ:

Դեռ այժմ բուն Հայաստանը այդ գրութեան մէջ է, որովհետև նրա մէջ յառաջադիմութեան ամեն տեսակ փորձերը խեղղուել են իրենց բնում, իսկ թէ ինչ է եղել նա մեզնից տասնեակ դարեր առաջ՝ անյայտ է մնում և շատ քիչ բան գիտենք մինչև որ գիտնական աշխարհը նորանոր աղբիւրներ գտնելով կպարզէ այդ բոլորը:

Ամենահին Հայաստանը, որ մեզ յայտնի է, դա եփրատ գետի ափերից սկսած մինչև Կուրի ափերը

տարածուող երկիրն է, մասամբ և Տիգրիսի վերին՝
հիւսիսային ափերը, բայց միայն Արաքսի աւազանը
ամբողջովին Հայաստանին է պատկանում: Եղել են ժա-
մանակներ երբ եղել է նաև Փոքր Հայք, որը սահմա-
նակից է Պոնտոսին և Կապադովկիային, իսկ Հայկա-
կան Կիլիկիան հայերի ձեռքն անցաւ միջին դարերում:

Մօտաւոր սահման գծելու համար կարելի է ասել,
որ Հայաստանը գտնուում էր Ալիս գետից մինչև Կուր,
Եփրատ, Տիգրիս և մասամբ էլ Ճորոխ, իսկ Միջազգետ-
քում մենք շատ քիչ գործ ենք ունեցել, այն էլ միայն
հիւսիսային մասերում: Առայժմ այսքան է տուել մեզ
գիտնական աշխարհը, բայց մնացածը մնում է մթնու-
թեան մէջ:

Մուլս Հայերը ժամանակի ընթացքում
Ուրարտու շատ բազմացան, որովհետեւ շատ ժո-
ղովուրդներ ու ցեղեր ձուլեցան նրանց
հետ. այդ պէտք է կատարուած լինի
միայն այն ժամանակ, երբ հայերի առաջխաղաց խումբը
հասաւ նախնի հայերնիքը՝ Ալիս գետից արևելեան կողմը
գտնուած երկիրը, որ ենթադրում են Քրիստոսից 10
դար առաջ պիտի եղած լինի և հէնց այդ երկիրն է
Հայոց պատմութեան մէջ յայտնի Փոքր Հայքը: Որքան
մեզ յայտնի է, այդ ժամանակ հայերի գլխաւոր պա-
րապմունքն էր՝ խաչնարածութիւնը: Այդ երկրում նրանք
ենթարկուեցան Հաթթ կոչուած ժողովրդի ազգեցու-
թեան, որ մի ժամանակ մասամբ կուլտուրացած մի
ժողովուրդ էր և այդ երկիրների տէր ու տիրական:

Այստեղից հայերը առաջ գնացին և մտան Ուրար-
տու կոչուած երկիրը, որտեղ բազմատեսակ ցեղեր էին
ապրում, բայց գլխաւորապէս խալդի կոչուած ազգը

կամ խալդէ ացիք, որոնք խաչնարած էին, ամառն
անց էին կացնում լեռների վրայ կամ հովիտներում,
իսկ ձմեռը՝ հողի վրայ փորուած խրճիթներում: Ար-
գիւնաբերութիւնը շատ ստոր աստիճանի վրայ էր
կանգնած, բայց երկրագործութիւնն ընդհակառակ մեծ
աշխոյժով յառաջադիմում էր: Քաղաքներն էլ մի առան-
ձին բան չէին ներկայացնում, այլ մեծ գիւղերի տապա-
ւորութիւն էին թողնում: Խալդէացիք իրենց անուա-
նում էին Խալդիի ծառաներ՝ Խալդիի անունից,
որ արեի աստուած էր: Ներկայումս կարծում են, որ
խալդէացիք միենոյն խալդիք են, իսկ Խալդիքը եր-
կիր է և գտնում է Հայաստանի հիւսիսային կողմ Սև
ծովի ափին:

Յայտնի չէ թէ Հայաստանը նախ
Ուրարտուի քան Ուրարտուի թագաւորութիւնը ինչ
աջարիազգը. էր ներկայացնում և կամ ինչպէս էր
կառավարում, միայն այսքանը յայտնի
է, որ մօտ 1270 թ. Քր. առաջ Ասորեստանի Սալմա-
նասար Ա. թագաւորը նուածեց այդ երկիրը և իրեն
հիւսիսային կողմից ապահովեցնելու համար ասսուրա-
կան գաղութներ հիմնեց: Ուրեմն գրանք ասսուրների
(ասորեստանցոց, չչփոթել ասորոց հետ) ցեղակիցներ
էին, բայց թէ ինչ անուններ էին կրում իրեն անհա-
տական ցեղեր առ այժմ մեզ յայտնի չէ և գուցէ գրա-
նից մէկն են և խալդէացիք:

Մարդկութեան պատմութիւնն ունի երկու շրջան՝
նախապատման և պատմական: Այս մեր
գրուածքը վերաբերում է պատմական շրջանին և այդ
շրջանը շատ հին սկիզբ ունի. առայժմ մենք գիտենք
որ դեռ Քրիստոսից 6000 տարի առաջ եղել են երկիր-

կիրճեր, իսկ մօտ 4000 ա. առաջ Հարաւային Միջազգեաքում երկու երկիր կար Շումիր և Ակվադ, գոյութիւն ունէր Բաբելոն քաղաքը, որ Տին-տիր-քի էր կոչում և 2300 թ. Ք. ա. Բաբելոնում եղած թագաւորի անունն անգամ մեզ յայտնի է: Բացի այս մենք գիտենք նաև Փիւնիկէի պատմութիւնը գեռ 2750 թ. Ք. ա., իսկ Ասորեստանի պատմութիւնը 1750 թուից Ք. ա.: Այս բանի հիման վրայ մենք իրաւունք ունենք ասելու, որ Ուրարտուն լինելով հարեան վերև յիշած երկիրներին, բնականապէս պէտք է ունենայ և հին պատմութիւն, աւելի հին քան յայտնի է մեզ, սակայն գեռ ևս այդ չի պարզուած և միայն այքան գիտենք որ մօտ 1200 թ. Ք. ա. Ուրարտուն արդէն քաղաքակիրթ երկիր է ճանաչւում:

Ուրարտու անունի տեղ հարեան ազգերը գործ էին ածում նաև Ուշտու, Ուրաշտու և Ուրտու անունները, որ միևնոյն Արարատն է և Նշանակում է ը արձը երկիր (ըստ ասորեստանցոց): Ուրարտուն գտնւում էր Վանայ լճից սկսած մինչև Սևանայ լիճը, Վանայ լճի ամբողջ հիւսիսային աւազանը Ուրարտուի մէջ էր գտնւում և կամ թէ Ուրարտուն կամ նրա հարաւային մասը մի ժամանակ կոչում էր նաև Նախի և ուշ ժամանակներում Ուրարտուն առանձին երկիր դարձաւ, իսկ Նախին էլ կառավարուեց սեփական թագաւորներով: Ուրարտուի հարաւար արեմտեան կողմը գտնւում էր Մուսասիր, որ այժմեան Մշոյ նահանգն է, թէպէտ գիտնականներից ոմանք կարծում են, որ այդ երկիրը գտնւում էր Վանայ լճից հարաւային կողմը, քայլ այդ չէ ճշտում: Ուրարտուին հարեան էին հետեւալ երկիրները. Բիանա՝ Վանայ ծովից արեմտեան կողմը գտնուող նահանգը Տուսպա կամ Տու-

ռուշպա մայրաքաղաքով (Վան, Տուսպ), Մանակամ Մինի՝ Բիանայի և Ուրմիա լճի միջև գտնուած երկիրը, Նախիր, որ ընդարձակ երկիր էր տարածուած Եփրատ և Տիգրիս գետերի վրայ Միջազգեաքից հիւսիս. Նախիրն սահմանակից էին Կիրլիի, Կուտառու, Խուբուշքեա ասուրական նահանգները: Նախիրից արևմուտք գտնւում էր Միւլիկ երկիրը (Մելիտինէ, որ Հայոց աշխարհի երրորդ Հայք նահանգն է, իսկ այժմեան Բարձր Հայքի՝ էրդէռումի նահանգը կոչում էր Մելիկիս:

Գիտնական աշխարհը նախնական Հայաստան ասելիս ընդունում է հետեւալ երկիրներ՝ Ուրարտու, Մուսասիր, Նախիր, Բիանա, Մանա, Միլիդ և Մելիդիս:

Առաջին կան նահանգներին սահմանակից էին արթաւանիներ գլխաւորապէս Ասորեստանցիք, ուրնք Քրիստոսից Ժե. Պար առաջ զօրացան և սկսեցին աշխարհակալութեամբ զբաղուել: Առաջին անգամ Հայաստանը յարաբերութիւն է ունեցել Բարեկոնի զօրեղ պետութեան հետ, բայց ուշ ժամանակներում, երբ այդ երկիրն արգէն յայտնի էր Ուրարտու անուամբ, զործ ունէր միայն Ասորեստանի՝ ասսուրացիների հետ: Քրիստոսից երկուհազար տարի առաջ, ասում են գիտնականները, Ուրարտուն աւելի կուլտուրացած երկիր էր, քան այն ժամանակ, երբ Հայերը նուածեցին և հետեւապէս յետոյ եղած յառաջադիմութիւնն արգէն հայերի ձեռքով է եղած:

1400 թուականին, մօտ առաջին անգամ Նախիրն ենթարկուեց Ասորեստանի կամ ասսուրների արշաւանքին: Յետոյ արգէն Մալմանասար Ա. շարունակից աշ-

իւարհակալական գործը, տիրեց Միջագետքին և մտաւ Հայաստան—Նախրի և իր ապահովութեան համար ասսուրական գաղութներ հիմնեց հարաւային Հայաստանում: Այդ ժամանակ Նախրին բնակեցրած էր հետիւներով: Այսուհետեւ ասորեստանցոց Թիգլատ-Պալասար Ա. (1108—1080 թ.) ամբողջ Նախրին տիրեց, յաղթեց այդ կողմերի դաշնակից իշխաններին, որոնք գաւառների տէր էին և մի տեսակ գաւառապետներ և հաշուում էին մօտ 60, յաղթեց նրանց և 1200 ձիու ու 2000 եղան տարեկան հարկ գրեց, իսկ իշխանների որդոց պատանդ վերցրեց ու այնպէս հեռացաւ:

Բաւական ժամանակ Նախրին խաղաղ կերպով հպատակուեց ասորեստանցոց, սակայն միենոյն ժամանակ պատրաստութիւն տեսաւ անկախութիւն ձեռքբերելու, որի համար 879—870 թուականներին Ասորեստանի Ասորենազիրպալ թագաւորը Նախրի արշաւեց: Այդ արշաւանքները մի քանի անգամ կրկնուեցան, նա անցաւ Տիգրիս գետը, տիրեց այժմեան Սասունին ու Բիթլիս-սու գետի հովիտը և բնակիչներից բերքի հարկ վերցրեց: Միւս կողմից էլ Արքելա քաղաքից մինչև Ուրմիոյ լիճը հասաւ ու ճանապարհին եղած երկիրները նուածեց:

Ասորենազիրպալի յաջորդ Սալ-
Արտմէ՛ մանասար Բ. (860—825 թ.) շարու-
837 թ. Քր. ա. նակեց իր հօր ծրագիրներն իրագոր-
ծել և Ուրարտու արշաւեց: Այդ ժա-
մանակ Ուրարտուի Արամէ թագաւորը միացնելով երկ-
րում եղած փոքր իշխանութիւնները՝ սպառնում էր
աւելի զօրանալ, որ ցանկալի չէր ասորեստանցոց: Այդ
ժամանակ նշանաւոր էր նաև Արգասկու կամ Արամալի

մայրաքաղաքը (ըստ ոմանց Հայաստանի Արմաւիր քա-
ղաքը): Սալմանասարը 837 թ. Ուրարտուն աւերի մատ-
նեց, մինչև Վանայ ծովն հասաւ, գրաւեց Արգասկուն
և Վանայ ծովի մօտ իր արձանը կանգնել տուաւ, իսկ
Արամէն ստիպուեցաւ երկրի խորքերը նահանջել:

Արամէից յետոյ Ուրարտեան իշ-
Սարդուրի Ա. խանութեան գլուխն անցաւ ինչ որ
մօտ 837-825 թ. կուտիպրինի որդի Սարդուրի Առա-
ջինը (յայտնի չէ թէ ով էր կուտիպ-
րինը): 833 թ. Ասորեստանի զօրքը մօտեցաւ Արգա-
նիս (Արածանի) գետի ափերին, որպէս զի Սարդու-
րից ետ խլեն Սուխմէ և Դայահնի երկիրները: Այդ
երկիրները գտնուում էին Արգանիս գետի աջ ափին
և Սարդուրին խլել էր նրանցից և թէ ինչպէս վեր-
ջացաւ այդ պատերազմը, յայտնի չէ, միայն 829 թ.
ասորեստանցիք նորից գէպի Ուրարտու արշաւեցին,
մտան Մուսասիր, աւերեցին ու կողոպտեցին այդ եր-
կիրը, բայց Սարդուրին դիմագրեց և 828 թ. Տուրուսպա-
կամ Տուսպա (այժմեան Վան) քաղաքն ամրացնելով իր
գան այնտեղ փոխադրեց, իրեն էլ անուանեց արքա-
յից արքայ, Բիանայի թագաւոր և Նախրի ի-
շխան, երկար ժամանակ պատերազմներ մղեց Սալ-
մանսարի գէմ, իսկ իր գործերը հրամայեց արձանա-
գրել ապառաժների վրայ:

Այդ օրուանից ասորեստանցոց ազդեցութիւնը
շատ ընկաւ և Ուրարտուի թագաւորները ոչ միայն
իրենց երկրի պաշտպանութեամբ էին զբաղուած, այլև
աշխատում էին Միջագետքն ու Ասորիքը (Միրիա)
խլել նրանցից:

Խսպուինիս նիս, որի օրով Ասորեստանում թա-
մօտ 825 թ. գաւորում էր Շամշի Ռամման Բ.
(825—812), որ իր Մուտարքիսս-Ասուր
զօրավարին ուղարկեց Նախրի և Խսպուինիսը ընդհա-
րուեց նրա հետ, բայց ասսուրացիք յաղթեցին, աւե-
րեցին երկիրը և ձիու հարկ դրին Նախրի բնակիչների
վրայ: Շամշի Ռամմանը քիչ յետոյ նորից Նախրի ար-
շաւեց, տիրեց Մանա երկրին ու անցաւ Պարսուա և
Միդիա: Նրա յաջորդ Ռամման-Նիրարի Գ. (812—783
թ.) շարունակեց պատերազմները և երկք անգամ Նա-
խրի արշաւեց, իսկ երկու անգամ էլ Մանա, սակայն
Ուրարտուին բնաւ չմօտեցաւ, որով այդ երկիրն աւե-
լի զօրեղացաւ:

Մինուաս թեան ժամանակ իրեն գահակից նշա-
մօտ 812—780 թ. նակեց իր որդի Մինուասին, որով այդ
ժամանակներում եղած շինութիւննե-
րը վերագրում են հօրը և որդուն: Երբ արդէն մեռաւ
Խսպուինիսը, Մինուասին գործակից եղաւ իր մայր Թա-
րի-Ռիաշը, որ երկրի խնամակալուհի էր և վանի նշա-
նաւոր ջրմուղները շինուած են նրա հրամանով: Հայ
պատմիչները և առհասարակ առասպելաբաններն այդ
բոլոր շինութիւններն վերագրում են Շամիրամ ա-
նունով թագուհուն, որի համար գիտնականներն ասում
են, որ այդպիսի թագուհի չէ եղել և այս դէպօռմ
պարզ է, որ պատմիչները շփոթել են պատմութիւնը և
Թարի-Ռիաշի տեղ ստեղծել են Շամիրամ:

Մինուասի զլխաւոր գործը Նախրին նոււաճեն էր,
որի պատճառով Ռամման Նիրարին նոր ։ Նախրի մտաւ,

իսկ յետոյ էլ Սալմանասար Գ. (783—773 թ.) վեց
անգամ իրար հակից Ուրարտու արշաւեց, բայց ոչինչ
չկարողացաւ անել: Մենուասը խիստ գիմադրութիւն
ցոյց տուեց, առաջացաւ դէպի հիւսիս արկելք և արե-
մուտք ու նոր քաղաքներ նոււաճեց, մինչոյն ժամա-
նակ լուէնինի քաղաքը Մինուասիշինի անուանեց:


Մովսէս Խորենացին Մանաւազ անունով նահա-
պետէ յիշում և գիտնականներից մէկը կարծում է, որ
դա պէտք է եղած լինի արձանագրութիւններում յի-
շուած Մինուասը, իսկ Մինուասիշին էլ Մանազկերտ:

Արգիատիս Ա.

Մինուասին յաջորդեց Արգիատիս
մօտ 780—755 թ. Ա., որ ամենից մեծ ջանք գործ դրեց
երկրի ու պետութեան սահմաններն
ընդարձակելու: Սա ժամանակակից էր Սալմանասար
Գ.ին և Ասուր-Դան Գին (773—755 թ.): Այս անգամ
ասսուրացիք ստիպուած էին պաշտպանուելու, որով-
հետեւ Արգիատիս Ա. յարձակողական դիրք էր բանել և
նոււաճեց Փոքր Ասիայի ու Ասորիքի մէկ մասը, մինչև
անգամ Ասորեստան արշաւեց, սակայն ստիպուած եղաւ
ետ նահանջելու: Սա նորոգեց Արմաւիր քաղաքը և
Արգիատինիշի կոչեց, իսկ Արագածն էլ իր անունով
Արգիատիս կոչեց:

Ոմանց կարծիքով սա հայ պատմիչների յիշած
Արմենակ նահապետն է: Վանայ ժայռերում եղած ար-
ձանագրութիւնների մէջ պատմուած են թէ ինչպէս
Արգիատիսը նոււաճել է Նախրին և մինչև Մելիտինէ
գտնուած գաւառները և առհասարակ յաղթող հանդի-
սացել:

Սարդուրի Բ. Արգիստիսի յաջորդ Սարդուրի
մօտ 755-735 թ. Բ. իր դէպի Ասորիք կատարած ար-
շաւանքով հոգի տուեց այն բոլոր մանր
պետութիւններին, որոնք աշխատում էին անջատուել
Ասորեստանից: Սարդուրի Բ. մինչև Կապաղովկիա հա-
սաւ և այդ յաջորդութեամբ սգեսորուած՝ մեծ զօրքով
Միջագետք արշաւեց: Սարդուրին Կումմուխ երկրում
Ընդհարուեց Թիգլատ-Պալսար Գ. (745—728 թ.) թա-
գաւորի հետ, որը նրան հալածեց մինչև Եփրատ գետի
կամուրջը, որտեղ Ուրարտուն ու Ասորեստանը բա-
ժանաւում էին: Այստեղ երկու պետերը հաշտուեցան,
բայց Սարդուրին գաշնակցելով Փոքր Ասիոյ իշխան-
ների հետ նորից ասորեստանցոց գէմ արշաւեց, բայց
739 թ. Թիգլատ-Պալսարը յաղթեց նրան, Նաիրիի
մէկ մասին տիրեց և մտնելով Բիանա՝ պաշարեց Տուս-
պա բերդը: Տուսպան այդ ժամանակ երկու մասի էր
բաժանւում, մէկ մասը շինուած էր հովտում ու շրջա-
պատուած էր գալարազարդ այգիներով ու ամարանոց-
ազարակներով, իսկ միւս մասը շինուած էր բարձուն-
քի վրայ սանդուղաձև (տերրաս) ճանապարհներով,
Թաղաքի այս վերջին մասը, որ անառիկ բերդ էր,
այնքան լաւ էր ամրացրած, որ Թիգլատ-Պալսարը
համոզուեց թէ վերցնելն անկարելի է, ուստի պաշա-
րուածների աչքի առաջ իր պատկերով արձան կանգ-
նեց, միացրեց Ուրարտուի հարաւային մասը Նաիրիի
հետ և որպէս զի նորից արշաւանքներ տեղի չունենան,
սահմաններն ուժեղացրեց ու վերադառնաւ Ասորես-
տան: Այս հարուածը շատ ուժեղ էր և ազդեցիկ, մա-
նաւ անդ որ հետզհետէ Ուրարտուն ողողուեց նորեկ-
ներով:



722 թ. Ասորեստանում թագա-
կամ Հորեց Սարգոնը (Սարիուքէն), որ մի
շարք պատերազմներից յետոյ իր զէնքը
Ուրարտուի դէմ գարձրեց:

ց 714 թ. Քր. ա. Մինոյն ժամանակներում Սար-
գուրի Բ-ի յաջորդ Ռուսա կամ Ուրսա
Ա. թագաւորը 23 մանր իշխանութիւնների տիրելով՝
երկիրն աւելի և ընդարձակել էր արևելեան կողմից
և մտադրուել էր ազատուել ասորեստանցոց ազգեցու-
թիւնից, որի համար նա ամին միջոց գործ դրեց: Ուր-
սան զաշնակցել էր Թոփիլի, Մոսոքի, Մուսասիրի,
Միլդիսի, Զիքառաթուի և Ուրմիոյ շրջակայ երկիրնե-
րի շշխանների հետ, միայն Մաննայի իրանզու թա-
գաւորը Սարգոնի զաշնակցից լինելով՝ մերժեց Ուրսայի
առաջարկը, որի համար Ուրսան ապստամբեցրեց Մա-
նայի բնակիչներին իրանզուի դէմ, իսկ Զիքառաթուի
թագաւորը Մանայի երկու քաղաքները գրաւեց: Սար-
գոնը զաշնակցին օգնութեան հասաւ յարձակմամբ ետ
խլեց Մաննայի Սուրանտաքու և Տուրտուքա քաղաք-
ները և այրեց, իսկ բնակիչներին 719 թ. գերի վարեց
Ասորիք: Մինոյն ժամանակ մեծ ապստամբութիւն
ծագեց Ասորեստանում և Սարգոնը ստիպուած եղաւ
վերադառնալ թողնելով Ուրսայի դէմ ծրագրած պա-
տերազմը և 717 թուին միայն նորից եկաւ Ուրսայի
դէմ: Մանայի թագաւոր իրանզու մեռած լինելով, նրա
յաջորդ Ազա սպանուել էր լեռներում, իսկ նրան յա-
ջորդների էր իր եղբայր Ուլլուսուն, որ ստիպուած եղաւ
ոչ միայն հպատակուել Ուրսայի, այլև 22 ամրութիւն-
ներ իրենց պահանորդներով նրան յանձնեց: Սարգո-
նին այս բանը դուր չեկաւ և Ուլլուսունի վրայ գի-
մեց: Ուլլուսունը իր զօրքով իր երկրի լեռնային հո-

վիտներում ամրացաւ, բայց Սարգսնը յաղթեց, առաւ Իզիրդի, իզիպիս և Արմիդ քաղաքները և ամրոցները, և ապա յարձակուեց Ուրարտուի վրայ, առքունի տնից 250 հոգու գերեց, 55 պարսպաւոր քաղաքներ գրաւեց, իսկ Ուլլուսունի 22 քաղաքները, որ Ուրսայի ձեռքն էին ընկել միացրեց Ասորեստանի հետ: Ուլլուսունը այս տեսնելով, գնաց Սարգսնի մօտ և գթութիւն խնդրեց, իսկ Սարգսնը ներեց և նորից նրան թագաւոր նստեցրեց, 22 մեծամեծ քաղաքները տուեց երկու ամրոցների հետ որպէս սեփականութիւն, միևնույն ժամանակ առանձին հոգ տարաւ այդ երկրում խաղաղութիւն պահպանելու համար և գերազարձաւ Ասորեստանում ծագած խոռվութիւնները զապելու: Այս անգամ էլ Ուրսան օգուտ քաղեց Սարգսնի բացակայութիւնից և Ուլլուսունին ապստամբութեան դրդեց, բայց հէնց որ Սարգսնը նորից արշաւեց, իսկոյն հնագանդեց նրան, բայց քիչ յետոյ Ուրսան Ուլլուսունից հպատակութիւն պահանջեց և նրա որդուն պատանդ վերցրեց: Այս անգամ Սարգսնը մեծ զօրքով գիմեց Ուրսայի գէմ և պատերազմեց. Ուրսան փախաւ և ամուր տեղեր ապաստանուեց, իսկ Սարգսնը իր զէնքը Մուսասիրի Ուրգանա թագաւորի գէմ ուղղեց, որովհետեւ նա չէր ուզում հպատակուել իրեն և Ուրսային էր ապաւինուել, յաղթեց նրան և Ուրգանան լեռները փախաւ, իսկ Սարգսնը առաւ Մուսասիր քաղաքը, բռնեց նրա կողմը, որդոցն ու գուստըներին, հաւաքեց նրա անասունները, գանձն ու ստացուածքը և 2100 մարդու գերի վարեց Խալդիա և Պակապարդու աստուածների հետ: Ուրարտուի Ուրսա թագաւորը լսելով այս, մանաւանդ իր Խալդիա աստուծու գերութիւնը, գա-

շոյնով ինքնասպան եղաւ և իր մեծամեծների բազուկների վրայ հոգին աւանդեց:

Սարգսնն իր զէնքը Ուրսայի գաշնակիցների գէմ ուղղեց, կործանեց Միլիստի թագաւորութիւնը, թագաւորին գերեց և մի ասսուրացի կուսակալ նշանակեց 712 թ.:

Արգիստիս Բ. թագաւորը Ուր-
714-ից սայի եղբայրն էր և նախ Ասորեստա-
կերջը ապստամբութեան դրօշը պար-
զեց և Մանային տիրեց: Ինչպէս երեսում է Արգիստի-
սը նեղ գրութեան մէջ էր ընկել, որովհետեւ ապստամ-
բութիւնից քիչ յետոյ նա դեսպաններ ուղարկեց Ասո-
րեստանի Մանքերիր (Աննքերիմ 705—681 թ.) թա-
գաւորի մօտ ընծաներով հաշտուելու համար: Հաւա-
նականն այն է, որ նրա օրով Քիմմերեաններն արգէն յարձակուել էին Ուրարտուի վրայ, որի մասին քիչ յետոյ կլասենք և նա այս անգամ ստիպուած էր Ման-
քերիրից օգնութիւն խնդրել:

Արգիստիս Բ-ին յաջորդեց Ուր-
Քիմմերեան սա Բ.: Այս ժամանակներից Ուրար-
Ռւրա Բ. տում կամաց-կամաց ընկնում է, կորց-

նում իր նշանակութիւնը, որովհետեւ Հայաստան են մանում Քիմմերեան ցեղերը: Այդ ցե-
ղերն սկզբում ապրում էին Սև ծովի հիւսիսային ափե-
րում, թափառաշրջիկ կեանք էին վարում և ձիավարժ
մարդիկ էին: Սկիւթացի ցեղերը, որոնք ապրում էին
դրանցից արևմուտք և նոյնպէս ձիավարժ ու թափա-
ռաշրջիկ էին, դուրս վանեցին Քիմմերեաններին իրենց

բնակութեան վայրերից և նըանք ստիպուեցան գաղթել դէպի հարաւ և մտան Փոքը Ասիա: Ճանապարհին բնական է, որ նըանք կպատահէին այն բոլոր աղգերին, որոնք ճանապարհին էին գտնւում կամ որոնց մօտով անցնում էին նրանք: Քիմմերեանք շատ անգութ գտնուեցան դէպի այդ ազգերը, աւերեցին երկրները, աւերի ու կողոպուտի մատնեցին պատահածը և դրանց մի մասը դէպի Ուրարտու դիմեց, իսկ մասցիալներս դէպի հարաւ-արեմուտք առաջ գնացին: Այդ կատարում էր Սարգոնի թագաւորութեան ժամանակներից: Դրանք վերջն անցան Փոքը Ասիայի խորքերը, մօտ 650 թ. Սարգոն աւերեցին, պաշարեցին Եփեսոս քաղաքը և քանդեցին Մազնէսիան, մինչեւ որ վերջապէս մօտաւորապէս 600 թ. Լիդիացոց Ալիատ Դ. թագաւորը ոչնչացրեց նրանց:

Ուրարտու մաած Քիմմերեաններին^{*)} թէպէտ Ասորեստանցոց թագաւոր Ասսուրդանը (681—668 թ.) յաղթեց, սակայն նրանց մի մասն անցաւ դէպի Միդիա և այնտեղ հաստատուեց: Ուրարտուի թագաւորն էլ անզօր գտնուեց նրանց դէմ, երկիրն աւերուեց:

Ուրսա Բ-ի յաջորդ էրիմինայի օրով արդէն Ուրարտուն սկսեց ողողուել, եկ հնդկապացիներով և հայերի առաջախաղաց խումբն էլ նրա օրով Հայաստան-Ուրարտու մտաւ:

Երիմինիային յաջորդեց Ուրսա Գ.
Ուրսա Գ.

կամ Ռուսա, որ ժամանակակից էր Ասորեստանի Ասսուրդանի-պալ (668—626 թ.) թագաւորներին: Ուրսա Գ. գլխաւորապէս շինարարութեամբ զբաղուեց, որովհետեւ Քիմմերեաններն ու հայերը շատ մեծ վլասներ էին տուել, մանաւանդ որ դրանց վրայ աւելացել էին նաև Ակիւթացիք, որոնց մի մասը հիւսիսային Հայաստանում մինչև անգամ զաղութ էր հիմնել:

674 թ. Ուրսան դաշն կապեց Ասսուրդանի հետ և նոքա միասին դիմեցին երկու պիտութիւնների սահմաններում գտնուած Խուպրիա երկրի իշխանի դէմ, որը օգտուելով նորեկ ցեղերից առաջացած խառնակ դրութիւնից, հիւրընկալել էր Սսորեստանի և Ուրարտուի փախստականներին և աշխատում էր Քիմմերեանների օգնութեամբ հիմնել անկախ սեփական պետութիւն և այդ երկու թագաւորների պահանջներին էլ չէր ուզում գոհացում տալ: Ասսուրդանը գրաւեց այդ գաւառները, իսկ այդ իշխանը կոսուի մէջ սպանուեց: Այս անգամ Ուրարտուն և Սսորեստանը միացած էին ընդհանուր թշնամու դէմ և Ասսուրդանը բռնելով Ուրարտուի փախստականներին, հրամայեց Ուրսիայի մօտ ուղարկել: Միկնոյն ժամանակներում Մանա երկիրն էլ համարեա հիմնայատակ աւերուեց, որովհետեւ նրանց Ախսիրի թագաւորը ապստամբուել էր: Երկրի աւերը շատ գրգռեց Մանայի ժողովրդին և նրանք սպանեցին Ախսիրիին:

^{*)} Կան կարծողներ և մինչև անգամ պնդում են, որ Քիմմերեանները հին Գամիրներ-Կապադովկացիք են, որոնք յայնին նաև հայ պատմագիրներին:

Սարդուրի Գ. Գ., որ Ուրարտուի վերջին թագաւորոն
է ճանաչուած: Նա ոչ միայն հաշտ
մնաց Ասորեստանցոց հետ, այլ և նրանց գերիշխանու-
թիւնն ընդունելով Ասորերանիպալին ընծաներ ու-
ղարկեց: Սարդուրին աւելի պալատական կեանքին էր
նուիրուած և անհոգ կեանք էր վարում: Այս անգամ
Հայերն արդէն սկսում էին կամաց-կամաց երկրին տէր
գառնալ, իսկ Միդիա կամ Մարաստանն էլ բաւական
զօրեղացել էր: Յայտնի չէ պարզապէս թէ ով կրծա-
նեց Ուրարտուի թագաւորութիւնը, միայն այդ պէտք
է վերագրել կամ Միդիացոց և կամ հայերին, որովհե-
տեւ այդ օրից Ուրարտուն հայերի ձեռքին է և նրանք
աշխատում էին դուրս վանել Խալդիներին և երկու
երեք դարուց յետոյ արդէն Հայաստանը մաքրուել էր
Խալդիներից, որոնք քաշուել էին հիւսիս:

Այսուհետեւ մենք կպատմենք Հայերի սկզբնաւո-
լումը և Հայաստան երկրի պատմութեան սկիզբը:

Ե Ե Խ Ն Ի Հ Ե Ց Ա Ս Տ Ա Ն

Հայերը տիրեցին Ուրարտուին,
Սիլիրացին բայց չկարողացան երկիրը կարգի բի-
Հայաստանում րել, երբ հիւսիսային երկիրներից Հա-
յաստան մատան Սկիւթացիք: Այդ ժա-
մանակ Ասսուրեանիպալ թագաւորը ստիպուեց հայերի
փոխարէն կոյւ մղել, որովհետեւ վախենում էր, որ նրանք
կարող էին մտնել Ասորեստան. Նա յաղթելով սկիւ-
թացիներին, դուրս քշեց նրանց երկրի սահմաններից:
Բայց նրանք 20 տարի յետոյ նորից սկսեցին առաջ

շարժուել և 635 թ. մտան Հայաստան: Այս անգամ
Ասորեստանը ուժասպառ էր եղել և Մէդացոց (Մի-
դիա = Մարաստան) կիաքսար թագաւորը զօրանալով
պաշարել էր Նինուէ քաղաքը, բայց վախենալով որ
սկիւթացիք կարող են մտնել նաև իր երկիրը, գուրս
եկաւ պատերազմելով և թէպէս սկզբում յաղթուեց,
սակայն պատրաստուելով մեծ զօրքով դիմեց նրանց
վրայ և յաղթելով դուրս քշեց բոլորովին թէ իր եր-
կրից և թէ Հայաստանի սահմաններից:

Մէդացիք այն աստիճան զօրացան, որ իրենց
ձեռքը գցեցին մինչև Ալիս գետ և Լիդիա տարածուած
երկրները և հարկատու գարձրին: Ասորեստանը բոլո-
րովին թուլացել էր և քաշուել էին Բարելոն, որտեղ
փոքրիկ թագաւորութիւն էին հաստատել:

Մինոյն ժամանակներում յեղա-
կիւրոս եւ փոխութիւն ծագեց Մէդացոց երկրում
երուանդ և 550 թ. Քր. ա. ըստ ոմանց պար-
սիկ Աքեմեննեան կիւրոս իշխանը յաղ-
թելով մէդացիներին, գերի բռնեց նրանց Աստիագ կամ
Աժգահակ թագաւորին և իր երկրի սահմանները մին-
չև Լիդիա հասցրեց: Այս անգամ նրան օգնեցին հպա-
տակ ազգերը և նա Հայոց, Մանայի ու Աշկուզա (Աս-
քանազեան) երկիրների ընակիչների օգնութեամբ գի-
մեց Բարելոնի վրայ ու կործանեց այդ թագաւորու-
թիւնը: Յոյն պատմիչների ասելով այդ ժամանակ Հա-
յաստանում իշխում էր Երուանդ թագաւորը, որ իբր
թէ պատերազմել է մէդացոց Աստիագ թագաւորի հետ,
յաղթուել և հարկատու գարձել: Վերջը Երուանդն ա-
պլստամբում է, բայց կիւրոսը բռնում է նրան և իրեն
հպատակեցնում: Այստեղից Երուանդն ու կիւրոսը բա-

թեկամանում են: Երուանդի յաջորդն եղել է Տիգրան: Այս երկու հայ թագաւորներին յիշում է նաև Մովսէս Խորենացին, սակայն դեռ ևս վերջնականապէս չէ հաստատուած այդ բոլորը:

Հայաստանը 519—515 թուական-

Պարսիկ ներից սկսած պարսից պետութեան կուսակալները մի կուսակալութիւն էր և թէպէտ երկիրը նրանց ձեռքին էր, այնուամենայնիւ Երասխ գետի հովիտներում կար սեփական ազգային կեանք՝ կամ հայկական փոքրիկ իշխանութիւններ կային և կամ թէ մի միացեալ փոքր տէրութիւն, բայց նրա պատմութիւնը գեռ ևս չէ լուսաբանուած: Պարսից թագաւորներն կուսակալներով էին կառավարում Հայաստանը և ուզած դէպքում փոխում էին նրանց և մի ուրիշ նշանակում: Կուսակալներն արքայավայրել կեանք էին վարում, ունէին սեփական արքունիք: Կուսակալի մօտ կային նաև արքունի քարտողար և զօրապետ, որ իր ձեռքի տակ ունէր կանոնաւոր զօրք և տեղացիներից կազմած ժամանակաւոր գնդեր: Այս երեք պաշտօնեաները սովորաբար մէկ մէկու թշնամի էին և երեք համարեամ համերաշխ չէին ապրում Պարսից թագաւորը ելմտից հաշիւը քննելու համար յաճախ պաշտօնեաներ էր ուղարկում և հաշուի մտքուր լինելուց էր կախուած կուսակալի պաշտօնում մնալը: Կուսակալներն առհասարակ աշխատում էին երկիրը ծաղկած վիճակի մէջ պահել, որպէս զի առանց դժուարութիւնների կարողանային ժողովել Երկրից տրուելիք հարկերը, որոնք շատ մեծ էին ժամանակի հետ համեմատած: Արտաքսերքսես Բ. թագաւորի օրով մէսչե Սև ծովի ափեր ապրող բնակչութիւնը բաժա-

նուած էր 13 կուսակալութեան և դրանք միասին վճարում էին 400 տաղանդ հարկ (ըստ պարսից հաշուե մօտ 680,000 բուրլի): Երկիրը կուլառուրապէս զարգանում էր, որովհետեւ կուսակալները աշխատում էին վերջ տալ աւագակախմբերին, երկիրը կառավարում էին խաղաղ և որոշ օրէնքներով, բնակիչների մէջ ծագած անհամաձայնութիւնները վերջացնում էին հաշտութեամբ, հաղորդակցութեան ճանապարհներ էին բաց անում և որ գլխաւորն է, աշխատում էին բարելաւել երկրի տնտեսական դրութիւնը:

Քանին յոյն պատմիչը նկարագրել է այդ ժամանակուայ հայոց տունը: Նրա ասելով հայերի տները գետնափորէին և երկու գուռ (մուտք) ունէին՝ մէկը՝ նեղ մարդկանց համար, իսկ միւսը ընտանի կենդանիների: Զմեռը 15—20 անդամից բազկացած ընտանիքը տեղաւորում էր այդ փոքրիկ բնակարսններում անսառնների հետ, մինչդեռ ամառը նրանք անց էին կացնում բացօթեայ՝ լեռներում և դաշտերում: Միևնույն տան մէջ էին պահուում նաև ուտեստի պաշտեղէնները, ինչպէս գարի, ցորեն, քիշմիշ կամ չամիչ և գորեջուր, որ հին հայերը պատրաստում էին շատ մեծ քանակութեամբ և մինչեւ անգամ արտահանում էին երկրից դուրս:

Հայերի պարսից տիրապետութիւնն Ա.

թեան ժամանակ խաղացած դերն էլ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ նրանք ձգտում էին անկախութիւն ձեռք բերելու, որի համար էլ բազմաթիւ պատերազմներ մղեցին պարսից Դարեհ Ա.-ի (521—485 թ.) հետ: Դարեհը ստիպուեց զօրք ուղարկելու հայերի դէմ Դադարշիս զօրավարի

հետ և առաջին պատերազմ տեղի ունեցաւ Հայաստանի ԶՈՒՊԸ (յայտնի չէ տեղը, գիտնական պ. Բասմա-ջեանը կարծում է, որ Սասուն պիտի հղած լինի) տեղում 520 կամ 519 թ.: Հայերն երկրորդ անգամ յարձակուեցան Դաղաբշխի վրայ, և այս անգամ Տիգրա (նոյն գիտնականի կարծիքով Տիգրանակիրո) տեղում պատերազմ եղաւ, որտեղ հայերից 540 հոգի սպանուեցան, իսկ 520 էլ գերի ընկածն, Հայերն երբորդ անգամ ապատամբեցան և Հայաստանի Ուհյամա (տեղը յայտնի չէ) բերդի մօտ պատերազմ եղաւ, հայերը մեծ ջարդ կրեցին, բայց երեսում է, որ պարսիկները չկարողացան զափել նրանց և Դարեհն վաւմիսա պարսիկին ուղարկեց նրանց դէմ, բայց հայերը նրան պատերազմի դուրս կանչեցին և այս անգամ Ասորեստանի Իզիդու (տեղը յայտնի չէ) տեղում պատերազմ եղաւ և հայերից 2024 մարդ սպանունեց: Այս էլ չօգնեց և 519 թ. Աւտիյարա (տեղը անյայտ) տեղում՝ Հայաստանում պատերազմ եղաւ, որտեղ հայերից 2045 հոգի Հարդուեցան, իսկ 559 հոգի էլ գերի ընկածն, Այսուհետեւ Արախա անունով մի հայ իբր թէ Բարելոնի թագաւոր է հոչակում, բայց նրան պատերազմի ժամանակ բռնեցին և Բարելոնում իր զօրավար-դործակիցների հետ խաչեցին, մօտ 516 թ.:

Դարեհին յաջորդեց Քսերքսէս (485—465 թ.), որի օրով Հայաստանը հպատակ մնաց նրան, բայց հաւատական է, որ կային առանձին հայ իշխողներ՝ թափառըներ և կամ իշխաններ, բայց նրանք կախումն անէին պարսիկ պետութիւնից:

ՍԵԼԵԿԵԱՆԸ Պարսկաստանում թագաւորեց Դարեհի կողմանն (336—330 թ.), որի օրով Հայաստանի բաղդը վճռում է: Դարեհի օրով շատ զօրացաւ Ալէքսանդր Մակեդոնացի նշանաւոր թագաւոր-զօրավարը և Փոքր Ասիային տիրելով հասսաւ Պարսից սահմաններին: 331 թ. հոկտեմբեր 1-ին Արքելա քաղաքի մօտ պատերազմ տեղի ունեցաւ Ալէքսանդր Մակեդոնացու և Դարեհի միջն, Դարեհը յաղթուեց և այդպիսով վերջացաւ Պարսից Աքեմենեան հարստութիւնը, Հայաստանն էլ ընկաւ մակեդոնացոց ձեռքը և երկրի մարզպան կամ կուսակալ նշանակուեց Միհրան անունով մի նշանաւոր պարսիկ իշխան, որ առաջ Սարդէս քաղաքի պետ էր եղել և միացել էր մակեդոնացոց հետ: Երկիրը կառավարում էր պարսիկներից որոշուած օրէնքներով:

Ալէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ՝ 323 թ. նրա նուաճած երկիրները բաժանուեցան նրա զօրավարների մէջ և Հայաստանը բաժին ընկաւ Սելեկացիներին: Սելեկը մակեդոնացի իշխան էր և Ալէքսանդր Մակեդոնացու հետ Ասիա գնալով իր քաջութեամբ և հնարագիտութեամբ նուաճեց Բարելոնը, որտեղ և կուսակալ եղաւ: Այդտեղից նա իր իշխանութիւնն աւելի հեռուն տարածեց՝ տիրեց շրջակայ երկիրներին՝ Մարաստանին, Պարսկաստանին և 306 թ. իրեն թագաւոր հրատարակեց, որով սկսուեց Սելեկան թագաւորութիւն: Սելեկը Տիգրիսի վրայ Սելեկիա անունով, իսկ երկրում (Բարելոնից մինչև տիրած երկիրները) 75-ի չափ քաղաքներ հիմնեց: Նրա յաջորդներն էլ շարունակեցին նրա աշխարհակալութեան պակասը, սակայն 129 թ. Պարթեները յաղթեցին նրանց

և երկրի մեծ մասը խլեցին: Հայոց Տիգրան Բ. Մեծ թագաւորն էլ 83 և 74 թուականներին նրանց ձեռքից Ասորիքը խլեց, իսկ Հռոմայեցոց Պոմպէոս զօրավարը Տիգրան Բ-ի ժամանակ վերջ տուեց այդ թագաւորութեան:

Հայերը չթողին իրենց ըմբոստ
բարքը և ինչպէս որ պարսից տիրա-
պեսութեան ժամանակ էին ձգտում

անկախութիւն ձեռք բերելու, այնպէս
էլ Սելևկացոց օրով սկսեցին շարժուել, բայց նրանք այնքան միայն կարողացան անել, որ 317 թ. Փրա-
տապար կամ Հրահատ անունով հայ իշխանը Հայաս-
տանի կուսակալ նշանակուեց: Նա իր երկրում աղատ իշխան էր, ինքնազլուխ կառավարում էր և մինչև ան-
գամ ինքնակամ մի պատերազմ էլ մղեց Պոնտոսի դէմ:

Նրա յաջորդ Արդուարտէսը Հրահատի ազգական-
ներիցն էր և աւելի պատուապահանջ գտնուեց քան իր նախորդը՝ 301 թ. Քր. ա. բացարձակապէս ապստամ-
բութեան դրօշ պարզեց, սակայն Սելևկը ճնշեց այդ ապստամբութիւնը, որովհետեւ նա դրանից տասը տա-
րի առաջ արդէն բաւական ամրացել էր և ապահովել իր իշխանութեան տակ գտնուած երկիրների հպատա-
կութիւնը:

Այնուհետև Հայաստանը բաժանուեց երկու կու-
սակալութեան և այդպէս կառավարուեց մինչև 168 թ.
Քր. առաջ, եթք արդէն երկու կուսակալներն էլ ապս-
տամբութեան և սեփական թագաւորութիւն հիմնեցին:
Արտաշէս կուսակալն (Արտաքսի) իրեն հրատարակեց
ըստ Հայաստանի (Արտաքսի կամ Երասլի հովիտն
Արտաշատ քաղաքով) թագաւոր (հիւսիսային կողմը):

166 թ. Սելևկացիք զօրք ուղարկեցին նրա դէմ և նրան
գահից զրկեցին: Հարաւում՝ Սոփենում իրեն թագաւոր
հրատարակեց Զարիադր կամ Զարէն կուսակալը:
Ահա այդ պատմութիւնը.

Արտաշէսը Արտաւազդ կուսակա-
չալի լի որդի լինելով յաջորդեց իր հօրը
բազաւորներ 190 թ. Քր. ա. և Սոփենի Զարեն կու-
սակալի հետ գաշնակցելով ապստամ-
բութեց, որովհետեւ Սելևկացիք մի պարտութիւն էին կրել
ու բաւական թուլացել: Զնայած Արտաշէսին գահա-
զուրկ արին, բայց նա օգտուեց Սելևկացոց խառնակ
գրութիւնից և ինքնազլուխ պետութիւն հիմնեց: Այս-
տեղից սկսուեց Հայաստանի առաջին կանոնաւոր
հարստութիւնը, որ գիտնական աշխարհը կոչում է
Արտաշիս և ան: Այս թագաւորութեան մէջ էին
մտնում Երասլի հովիտը, Կովկասի մի մասը, Վանայ-
լձի աւազանը, Եփրատի վերին մասերը, իսկ արե-
մուտքեց սահմանակից էր Փոքր Հայքը: Փոքր Հայքը
ինքնավար երկիր էր և Պոնտոսի թագաւորութեան հետ
բաշեկամական յարաբերութիւններ էր պահպանում և
այդ էր պատճառը, որ 112 թ. Ք. ա. նա միացաւ Պոն-
տոսի հետ: Արտաշէսը մեռաւ 159 թ. Քր. ա.:

Արտաշէսին յաջորդեց Արտաւազդ Բ. (159—149
թ.), որի օրով Պարթևներն սկսել էին արդէն իրենց
աշխարհակալական գործը: Պարթևննորը մօտ 250 թ.
Ք. ա. աշխարհ եկան: Բակտրիայի սահմաններում ապ-
րող Պարնիսաթափառական ցեղի Արշակ և Տիրիդատ իշ-
խանները գէպի արևմուտք առաջանալով Սելևկացինե-
րից խլեցին Աստաբեն նահանգը և ապա ներս խուժե-
ցին նախնի Պարսկաստանի նահանգները և տիրելով,

ամրացան: Աելեկ Բ. թագաւորը շատ աշխատեց հեռացնել Արշակին իր երկրից, բայց չկարողացաւ և այդպիսով սկիզբ առաւ Պարսկաստանի պարթևների թագաւորութիւնը, որ վերջացաւ 226 թ. Քր. յետոյժ Այս ցեղից էին և Հայոց Արշակունի թագաւորները:

Այստեղից Հայոց պատմութիւնը շատ խառն է և Արտաւազդին յաջորդող թագաւորներից յիշում է միայն Արտօադիստիս, որ թագաւորեց 123—95 թ. Քր. ա. և երկար պատերազմներ մղեց Պոնտոսի Միհրդատ Բ. թագաւորի դէմ:

Նրան յաջորդեց Տիգրան Մեծը (94—56 թ.), որի օրով Հայաստանը փառքի գագաթնակէտին հասաւ: Տիգրան Մեծից էլ սկսում է Հայոց իսկական պատմութիւնը:

Ահա այն ամենի համառօտ տեսութիւնը, որ մինչև այսօր տուել են հայ և օտար զիտնականները Հայ ազգի սկզբնաւորութեան մասին և ես էլ տալիս եմ ձեզ, որպէս զի առանց զպլոցի կարող լինէք սովորելու ձեր ազգի ծագումը:

Ա Ե Պ Զ

♦ ԽԱՐԱՁԱՆ ♦

ԺՈՂՈՎՐԴԻՑԿԵՆ ՅԵԲԵԹԵՄԵԹԵՔԹ

Հրատարակում է

Հարկաւոր դեպիում պատկերներով

Բաժանորդներն առաջին վեցամսեակի ընթացքում
(փետր. 21-ից) կստանան 25 համար շաբաթաթերթ և 6
դիրք պատկերազարդ, այն է՝

1. Նախագատմական կեանք.
2. Ռւրաբու և հայերի հայրենիքը.
3. Լեհաստանի հայեր.
4. Լեռն Զ. Հայոց թագաւոր.
5. Միքայէլ Նալբանդեան.
6. Մանկական գիրք:

1000 բաժան. եղած դէպօւմ նաև «Հայաստանի քարտ»

վեց ամսեակ 1 լ., 3 ամիս 50 կ., ամիսը 20 կ.:

Հանցէն՝ Տիֆլիս Միհայլովսկայ ոլ., № 38. Խա-
չատուր Տեր-Մարկարյանց.

ՀՀ Ազգային գրադարան



NL0411038

